# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Ծովինար Գալստյան, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կապի և փոստի վարչության փոստի բաժնի պետ, կապի և փոստի վարչության պետի պարտականությունները կատարող:

**2. Գործուղման վայրը և ժամկետները.**

Բելառուսի Հանրապետություն,

ք. Մինսկ, 2023թ. ապրիլի 17-19-ը:

**3. Հրավիրող կողմը.**

Կապի տարածաշրջանային համագործակցության գործադիր կոմիտե (ԿՏՀ):

**4. Գործուղման նպատակը.**

Մասնակցություն 2023թ. ապրիլի 18-21-ը Բելառուսի Հանրապետության քաղաք Մինսկում կայանալիք «ТИБО-2023» միջազգային համաժողովի շրջանակում անցկացվելիք Փոստային կապի գծով ԿՏՀ Հանձնաժողովի և ԿՏՀ Փոստային կապի օպերատորների խորհրդի 54/43 համատեղ նիստին:

**5. Քննարկված թեմաները.**

Ս.թ. ապրիլի 18-ին ԿՏՀ-ի ներկայացուցիչների հետ մասնակցել եմ Բելառուսի Հանրապետության կապի և տեղեկատվայնացման նախարարության կողմից կազմակերպված տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների գծով «ТИБО-2023» 19-րդ միջազգային համաժողովի պաշտոնական բացման արարողությանը: Համաժողովի բացման արարողությունից հետո ծանոթացել եմ ցուցահանդեսին ներկայացված տարբեր բելառուսական, ռուսական և չինական կազմակերպությունների ցուցանմուշներին: Մասնավորապես՝ հեռահաղորդակցության սարքավորումներ, ապարատային միջոցներ և ծրագրային ապահովում մշակող արտադրողների,

ինչպես նաև բջջային և ֆիքսված կապի օպերատորների, բարձր տեխնոլոգիական արտադրանք, անվտանգության համակարգեր ու խելացի լուծումներ մշակող և մատակարարող կազմակերպությունների ցուցանմուշներին:

Համաժողովի շրջանակներում Բելառուսական փոստի տաղավարում Բելառուսական փոստի ներկայացուցիչների կողմից շնորհանդես է ներկայացվել ընկերությունում կիրառվող ժամանակակից SS-ծառայությունների վերաբերյալ.

- էլեկտրոնային անձնական հաշիվ իրավաբանական անձանց բջջային հավելվածում.
- Հաճախորդների կենսաչափական նույնականացման գործիքներ,
- Ծրագրային գործիքներ իրավաբանական անձանց համար. աշխատանք խմբային առաքումների հետ,
- էլեկտրոնային կտրոններ ձեր անձնական հաշվում և բջջային հավելվածում,
- ID-քարտերի հետ աշխատել բջջային հեռախոսի միջոցով (Android-ի համար),
- Թույլտվության գործիքներ ազգային փոստային էլեկտրոնային համակարգում:

Ս.թ. ապրիլի 19-ին մասնակցել եմ Փոստային կապի գծով ԿՏՀ Հանձնաժողովի և ԿՏՀ Փոստային կապի օպերատորների խորհրդի 54/43 համատեղ նիստին: Նիստի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. ՀՓՄ փոստային գործառնությունների խորհրդի և ՀՓՄ կառավարման խորհրդի աշխատանքի արդյունքներ,
2. ՀՓՄ փոստային գործառնությունների խորհրդի և ՀՓՄ կառավարման խորհրդի գարնանային նստաշրջանի նախապատրաստական աշխատանքներ,
3. ՀՓՄ 2023 թվականի արտահերթ համագումարի նախապատրաստական աշխատանքներ,
4. ՀՓՄ 27-րդ համագումարի որոշումների կատարման գործողությունների ծրագիր և Աբիջանի փոստային 2022-2025թթ. ռազմավարություն,
5. Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի 2022-2025թթ. ՀՓՄ տարածաշրջանային զարգացման ծրագրի իրականացում,
6. «ՀՓՄ և տարածաշրջանային միությունների միջև համագործակցության ամրապնդումն ու զարգացումը» որոշման նախագծի թարմացում և ՀՓՄ 28-րդ համագումարի նախապատրաստական աշխատանքներ,

7. ԱՊՀ աշխատանքային մարմինների կողմից փոստային անվտանգության հարցերի շուրջ ԿՏՀ անդամ պետությունների փոխգործակցության ձևերի մասին հուշագրի նախագծի քննարկման ընթացք,
8. ԿՏՀ-ի Կապի ադմինիստրացիաների կողմից ԿՏՀ-ի թեմատիկայով փոստային նամականիշերի թողարկումների կազմակերպման մասին Համաձայնագրի իրականացման ընթացք,
9. ԿՏՀ աշխատանքային մարմիններում ղեկավար կազմի ընտրություններ և այլն:

**6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Նիստի օրակարգում ընդգրկված ԿՏՀ աշխատանքային մարմիններում ղեկավար կազմի ընտրությունների շրջանակներում աշխատանքային հանդիպումներ եմ ունեցել ԿՏՀ-ի գործադիր կոմիտեի տնօրեն Նուրուդին Մուխիտդինովի և նրա տեղակալ Նատալյա Զորյայի հետ: Մասնավորապես, քննարկվել է Փոստային կապի գծով ԿՏՀ Հանձնաժողովի նախագահի ընտրության հարցը: Առաջարկել եմ գործող հանձնաժողովի նահագահի փոխարեն դիտարկել Բելառուսի Հանրապետության կապի և տեղեկատվայնացման նախարարի տեղակալ Նատալյա Գորդեենկոյի թեկնածությունը:

Միաժամանակ, ԿՏՀ-ի Փոստային կապի օպերատորների խորհրդի նախագահի տեղակալի պաշտոնում առաջադրել եմ «Հայփոստ» ՓԲԸ գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Արտակ Ղուլյանի թեկնածությունը: Առաջարկը ընդունվել է և Արտակ Ղուլյանը ընտրվել է ԿՏՀ-ի Փոստային կապի օպերատորների խորհրդի նախագահի տեղակալ:

Նիստի ընթացքում տեղի է ունեցել նաև հանդիպում Բելառուսի Հանրապետության կապի և տեղեկատվայնացման նախարարության փոստային կապի բաժնի պետ Սվետլանա Շիմանսկայայի հետ: Վերջինիս հետ քննարկվել են համատեղ հայ-բելառուսական նամականիշի թողարկման գործընթացի ապահովման հետ կապված հարցեր: Նիստի շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել Ռուսաստանի Դաշնության, Ուզբեկստանի Հանրապետության կապի ադմինիստրացիայի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են յուրաքանչյուր երկրում իրականացվող փոստային կապի բնագավառի օրենսդրական բարեփոխումների հետ կապված կապված հարցերը:

Միաժամանակ, առաջարկվել է հաջորդ Փոստային կապի գծով ԿՏՀ Հանձնաժողովի և ԿՏՀ Փոստային կապի օպերատորների խորհրդի համատեղ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետությունում:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Փոստային կապի գծով ԿՏՀ Հանձնաժողովի և ԿՏՀ Փոստային կապի օպերատորների խորհրդի 54/43 համատեղ նիստին ընդունվել են որոշումներ և կազմվել արձանագրություն:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Նիստի ընթացքում կատարված առաջարկությունները և դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները ներառված են որոշումների և արձանագրության մեջ:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը.**

Ծովինար Գալստյան

25.04.2023թ.